

Անշարժ գույքի վարձակալության պայմանագիր

Իննը մարտի երկու հազար տասը թվական

գ. Ամասիա

ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի համայնքը, այսուհետ «վարձատու», ի դեմս համայնքի ղեկավար ԱՂԱՍԻ ԱՇՈՏԻ ԱՄԻՐՅԱՆԻ /ծնված 31.03.1961թ., անձ ԱՌ 0461327, տրված 09.11.2007թ ՀՀ Ոստ 021 ԱԲ /, բնակվող ՀՀ Շիրակի մարզ գ. Ամասիա փ.26, շ.1, բն. 1, մի կողմից և Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ «վարձակալ», ի դեմս Հայաստանի Հանրապետության Կառավարությանն Առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի, որի փոխարեն ՀՀ Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա Գրիգորյանի կողմից 03.03.2010թ., տրված լիազորագրով հանդես է գալիս ՀՀ քաղ ՎԱՐԴԱՆ ՀՐԱՉԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ /ծնված 19.06.1961թ. անձ ԱԷ 0450640, տրված 16.06.2000թ., ՀՀ Ոստ 021 ԱԲ / բնակվող ՀՀ Շիրակի մարզ գ. Ամասիա փ.20. տուն 1, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը միմյանց միջև հետևյալի մասին

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Սույն պայմանագրով՝ վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր նորազնտմանն ու օգտագործմանը հանձնել ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի համայնքի վարչական շենքի երկրորդ հարկից աշխատանքային տարածք, 102.94քմ /մեկ հարյուր երկու ամբողջ, իննսունչորս հարյուրնորդական / ընդհանուր մակերեսով, որպես գրասենյակ օգտագործելու համար, այսուհետ անշարժ գույք:
- 1.2 Անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ՝ 1201212, տրված 31.08.2005թ. ԱԳԿ-ՊԿ Ամասիայի տարածքային ստորաբաժանումից:
- 1.3 Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագիրը կնքվելու պահին Անշարժ գույքը վաճառված, նվիրված, գրավ դրած, կամ այլ կերպ օտարված չէ, որը հաստատվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ամասիայի տարածքային ստորաբաժանման թիվ N 0275193 09 03.2009 թ. տրված տեղեկանքով:
- 1.4 Վարձակալության հանձնված Անշարժ գույքի նկատմամբ վաճառողի սեփականության իրավունքի փոխանցումն այլ չնձի՝ հիմք չէ պայմանագիրը լուծելու կամ փոխելու համար
- 1.5 Պայմանագիրը կնքվում է 10 /տասը/ տարի ժամանակով:
- 1.6 Անշարժ գույքի վարձակալության պայմանագրի ժամկետի սկիզբ համարել 2010 թվականի հունվարի մեկը
- 1.7 Պայմանագրին, որպես նրա անբաժանելի մաս կցվում է տարածքի հատակագիծը

2 Վարձակալի իրավունքներն ու պարտականությունները

- 2.1 Վարձակալն իրավունք ունի.
- 2.2 Վարձատուից պահանջել՝ սույն պայմանագրի 1 կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել անշարժ գույքը.
- 2.3 Պահանջել վարձատուից իրեն տրամադրելու անշարժ գույքի փաստաթղթերը
- 2.4 Ջրաղնցրած Անշարժ գույքը կամ դրա մի մասը վարձատուի համաձայնությամբ հանձնել ենթավարձակալության
- 2.5 Պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե հայտնաբերվել է գույքի օգտագործմանն ամբողջովին, կամ մասնակիորեն խոչընդոտող թմրություններ
- 2.6 Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չէ կրում. Անշարժ գույքի վիճակը վատթարացել է.

3 Վարձակալը պարտավոր է

- 3.1 Պահպանել և կատարել օրենսդրությամբ նախատեսված պահանջները, որոնք ներկայացվում են Անշարժ գույքից օգտվելու և դրա հարակից տարածքները պահպանելու համար.

4 Վարձատուի իրավունքներն ու պարտականությունները

- 4.1 Վարձատուն պարտավոր է՝
- 4.2 Անշարժ գույքը վարձակալին տրամադրել պատշաճ փիճակում:
- 4.3 Վարձատուն իրավունք ունի՝
- 4.4 Վարձակալից պահանջել Անշարժ գույքն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և Անշարժ գույքի նշանակությանը համապատասխան
- 4.5 Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների եսկան խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը
- 4.6 Եթե վարձակալը Անշարժ գույքից օգտվում է պայմաններին կամ Անշարժ գույքի նշանակությանն անհամապատասխան, ապա պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները

5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1 Վճարն ուշացնելու համար վարձակալը վարձատուին վճարում է տուգանք՝ պայմանագրի գումարի 0 1 տոկոսի չափով և կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ պայմանագրի գումարի 0 1 տոկոսի չափով:
- 5.2 Տուժանքի (տուգանքի կամ տույժի) վճարումը կողմերին չի ազատում նրանց փրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:
- 5.3 Եթե վարձակալը պայմանագիրը դադարեցնելուց հետո չի վերադարձրել Անշարժ գույքը, կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարն ամբողջովին չի մարում վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:
- 5.4 Վարձատուն պարտավորություն չի կրում Անշարժ գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է

ՇՆ 21/0009/2014

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

09.03.2010թ. կնքված թիվ անշարժ գույքի վարձակալության պայմանագրի

ք. Երևան

29 01 2014թ

«Շիրակի մարզի Ամասիայի համայնք» ի դեմս համայնքի ղեկավար Ա Ամիրյանի /հաշվառված Շիրակի մարզ գ.Ամասիա փ. 26շենք, 1րն , ԱՀ0461327, 09.11 2007թ , 021/ այսուհետ՝ Վարձատու, մի կողմից և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի, իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 7, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ա.Անանյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վարձակալ), մյուս կողմից, հիմք ընդունելով 09.03 2010թ կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) պահանջները, փոխադարձ համաձայնությանը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին

1. Համաձայնագրի առարկան

Հիմք ընդունելով Պայմանագրի պահանջները՝ սահմանել Պայմանագրում նշված անշարժ գույքի ամսական վարձավճարը 20588 (քսան հազար հինգ հարյուր ութսունութ) ՀՀ դրամ, 2014թ -ի համար 01 01-31.12.2014թ.թ.՝ 247056 (երկու հարյուր քառասունյոթ հազար հիսունվեց) ՀՀ դրամ ընդհանուր գումարով՝ ներառյալ հարկատեսակները:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:


2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձատու
«Շիրակի մարզի գ. Ամասիա»
Հ՝ 900225051169
ՀՎՀՀ՝ 05900194
Համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան



Վարձակալ
«ԿԱԱԳԿԿ»
ք.Երևան, Արշակունյաց7
«Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն»
ՀՀ՝ 900013220026
ՀՎՀՀ՝ 02534338
Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Անանյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՀՀ, Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ամասիա, 26 փող. 19 շենք. Հեռ. (0246) 22310, էլ.
փոստ՝ amasia.shirak@mta.gov.am

N 0-25/225
14 սեպտեմբեր 2017թ.

ՀՀ ԿԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ՝
ՊԱՐՈՆ ՎԱՐԴԱՆ ՀԱՍՐԱԹՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հասրաթյան

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականի հունիսի 17-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն (ՀՕ 100-Ն)՝ Ամասիա, Արեգնադեմ, Բանդիվան, Բյուրակն, Գտաշեն, Հովտուն, Մեղրաշատ, Ողջի և Ջրածոր համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Ամասիա բազմաբնակավայր համայնքը: Հետևաբար համայնքների խոշորացումից հետո Ամասիայի համայնքապետարանի հարկային կոդը փոխվել է, նոր հարկային կոդը՝ 05544328 է:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ *Լ. Կար* ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կար. Առաջարար մասնագետ՝ Ն. Հակոբյան

